

ՀՈՎՎԱԿԱՆ ԱՅՅ ՀՆԴԿԱՀԱՅՈՒԹՅԱՆ

(Շարունակություն)

Հնդկաստանի Բոմբեյ քաղաքը, ինչպես աւացինք, գեղեցիկ, վաճառաշահ քաղաք է: Հարուստներն այստեղ փարթամ կյանք են վարում, ապրում են հորակապ շենքերում և վայելում բնության պարփակած բոլոր բարիքները: Սակայն, ուշադիր, այցելուն տեսնում է մյուս ծայրահեղությունը — փարթամ պատասխերի կողքին գետմանփոր հյուղեր ու ծառերի ճյուղերից հյուսած խճճոկ տնակներ, առանց բակի, պարուեզի և այլ հարմարությունների: Սրանց բնակիչները քաղաքի թշվառներն են, որոնք մի կերպ քարշ են տակի իրենց տիպուր գոյությունը: Կար, սակայն, այստեղ և մի այլ թշվառ դաս, որը շոնի ո՛չ մի անկյուն պատսպարփելու համար: Այս դասի մարդիկ գիշերում են փողոցներում, քնում մայթերի վրա, մեծ մասամբ ծովափում. շոնին ո՛չ անկողին, և ո՛չ վերմակ: Ինչպես տեղեկացանք, միայն Բոմբեյում, փողոցներում գիշերում են մոտ կես միլիոն շրջմուխիկներ:

Ինչպես Բոմբեյը, այնպես և Կաղկաթա ու Մադրաս քաղաքները, շատ խոնավ են, որի հետևանքով, երեկոյան ժամը տասից, գետինն արդեն թրչված է լինում: Դիշերներն անկողինը միշտ թրչվում է, ուստի և ամեն օր արևի տակ են փոռում և շրբացնում: Եթե 2—3 օրը մեկ անգամ շորերը խողանակով շմարրեն ու արևի տակ շփուն՝ նրանք մամուկալում են:

Հոդվածի առաջին մասում մենք ակնարկել ենք՝ թե Բոմբեյի հայ համայնքը գտնված էր, սակայն պատճառները չեինք հիշատակել: Եվ որովհետև նման դեպքեր սովորական են եղել անցյալում և կարող են կը թնդիլ հնդկաստանի հայ գաղութի այլ հասովածում ևս, ուստի և պարտք ենք համարում անդրադառնալ այդ հարցին: Խնդիրն հետևյալն է. — 1946 թվին Բոմբեյում տեղի է ու-

նենում Հայոց Եկեղեցական Վարչության ընտրությունը: Վարչության կազմի մեջ, ի թիվս այլ թեկնածուների, դրված է լինում բողոքական Հովհաննես Նաշարյանի և կաթոլիկ Պետրոս Սահակի թեկնածությունը: Նաշարյանը տեսնելով, որ ինքը վարչության մեջ չանցավ, մի բողոքագրով դիմեց մեզ՝ նոր Զուգա, և խնդրեց բեկանել Պետրոս Սահակի (Սահակյանի) ընտրությունը, որին հանձնարարվել էր գանձապահությունը: Ի՞նչ խոսք, ընտրությունը օրինական չէր, որովհետև օտար դավանության պատկանող մի անձն, այն ևս կաթոլիկ, Հայաստանյաց Առաքելական Եկեղեցու վարչական ապարատում պատասխանատու պաշտոն չէր կարող ունենալ, ուստի և հեռագրով ընտրությունը բեկանեցինք: Մենք ո՛չ մի կերպ չեինք կարող Պետրոս Սահակյանին հաստատել վարչության անդամ, մասնավանդ գիտեինք՝ թե ինչպիսի քայլայիշ աշխատանք են կատարեց և այժմ կատարում են մեր եկեղեցու դեմ ճիզվիտ կաթոլիկները: Նրանք միշոցների մեջ խարություն չեն դնում՝ պայքարելով համար Հայաստանյաց Առաքելական Եկեղեցու անաղարտության և առաքելական մաքրության ու պարզության դեմ: Կաթոլիկները, հատկապես Հնդկաստանում, մեծ գումարներ են ծախսում և աշխատում մեր եկեղեցիների կամ հոգածառ գնել ու հոյակապ տաճարներ: Առաջին ուղել, որպեսզի այս ճանապարհով, իրենց շքեղ եկեղեցին հակադրելով մեր համեստ, բայց հինավուրց ու պատմական խոշոր նշանակություն ունեցող եկեղեցուն, իրենց ուսմունքն ու կրոնը տարածեն: Իհարկե, այս չի հաջողվում նրանց Հնդկաստանում:

Թե ի՞նչ միշոցներով են կաթոլիկները պայքարում մեր եկեղեցու ու Սովետական դյուքսական Մայր Հայրենիքի դեմ, այդ

երևում է Հոռմի կամակատար՝ Աղաջանյան
Կարդինալի և նրա մանկավայրի Մկրտիչ
Արքար վարդապետի (Ն. Չուղայի 30 հայ
կաթոլիկների առաջնորդ) խլրդային աշխա-
տանքից: Յավ ի սիրտ, պիտի նշել, որ մեր
ազգայիններից ոմանք արտասահմանում
ծանոթ չեն այս դավաճան «փեռաքրի գործու-
նելովյան հետ և իրենց տունն են ընդունուա
նուանց, իսկ նրանք էլ, օգտվելով հայ առա-
քելականների անփորձությունից, ամեն շանք
գործ են դնում Հայ Եկեղեցին ներսից քայ-
քայելու համար:

Յուզ տալու համար՝ թե ի՞նչպիսի նորոք
ձևերով են Կաթոլիկ Հոգևորականները պայ-
քարուած Հայաստանյաց Առաքելական Եկեղե-
ցու դեմ, բերենք մի օրինակ: 1944 թ. նոր
Չուղայի կաթոլիկների առաջնորդ փեռ Ար-
քարը դիմում է նոր Չուղայի Կրոնական
Խորհրդին և արտոնագիր խնդրում՝ շրջելու
ամբողջ Հնդկաստանն ու Հայքա կղզին՝ կրո-
նական Հանգանակություն կատարելու հայ
առաքելականների մեջ, Թեհրանուած կա-
թողիկների համար Եկեղեցի կառուցելու
նպատակով: Կրոնական Խորհրդի հայ ան-
դամները յեն ցուցաբերուած պատշաճ զգո-
նություն և տրամադրուած են փեղին խըն-
դրած արտոնագիրը: Կրոնական այս անդպայշշ
վարմումքի դեմ բողոքներ եղել են: Այսպես,
Բոմբեյի մեր ազգայիններից Քաթիպյանը,
մեզ ուղարկած մի կծու նամակով, դատա-
պարտուած էր Կրոնական Խորհրդի վարմումքը:
Արտոնագիր ստանալով, փեղը առողք-փառք
ճանապարհվում է Հնդկաստան և իր սև գործը
տեսնում: Նա շրջուած է իր ցանկացած վայ-
րերը, դրամ կորզում մեր Հավաստացյալնե-
րից և շնորհակալության փոխարեն, Բոմբե-
յի հայոց Եկեղեցու բակում, ծաղր ու ծանա-
կի ենթարկուած Հայ Եկեղեցին: Հետագայում,
փեղը այդ նվիրատվություններով Թեհրա-
նում կաթոլիկ Եկեղեցի կառուցեց:

Բոմբեյում եղած ժամանակ, փեռ Արքա-
րի իշեանում է կաթոլիկ Պետրոս Սահակի
Հյուրանոցում, այլ խոսքով՝ իր դասանակ-
ցի մոտ: Պետրոսը որոշ ցուցումներ ու դա-
սեր է ստանում փեղից և սկսուած գործել:
Միակ մարդը Քաթիպյանն է վիճում, որ
ժամանակին հասկանում է, թե ի՞նչ կորրս-
տարեր հետևանք կարող է տանենալ Պետրոս
Սահակի ընտրությունն ու հաստատությու-
նը Հայաստանյաց Առաքելական Եկեղե-
ցու կարեւոր աշխափիս մի օղակում, ինչպի-
սին ազգային Եկեղեցու արվանդապահ՝ գան-
ձապահ լինելն է, ուստի համարձակորեն
դիմում է մեզ՝ խափանելու Պետրոսի ընտ-
րությունը:

Ի լրացումն այս ամենի, պիտի ասել,
հիշյալ Պետրոսը այնքան լավ նկարա-
տեր անձն չէ: Նա սոսկալի հարբեցող թղթամոլ, օղու շիշը միշտ գրանուում է շա-
զում, առատաձեռն է, որով և հայ առաքելա-
կանների շրջանում համակրողներ ուն-
եցիսի մարդիկ էին, որ ցանկանում է Պե-
տրոսին գանձապահ գարձնել: Կրքի երկուատեք բորբոքվել էին մինչև մեր Բո-
բեյ հասնելը (12 ապրիլի 1948 թ.), ուր վերջնականապես, բեկանեցինք ընտրությու-
նայի համայնքին բացարեցինք մեր եկ-
ղեցու հրմանական կանոնները ու համոզ-
ցինք ապրել համերաշխ ու խաղաղ:

Մենք կանգ առանք այս դեպքի վրա, ու-
րովնետև նման դեպք տեղի ունի նաև Կա-
թողիայում, որի մասին կիսուենք հետագա-
յում:

Բոմբեյի հայ համայնքի գտառվյան երկա-
րորդ պատճառը միշտ եղել է, և կլին-
եկեղեցական Վարչության անդամ ընտրվել-
լու շարադրաստիկ ձգուումը: Յավ ի սիրտա-
ընդրական իրավունքից օգտվողների մեծա-
մասն առաջարուած է իր թեկնածությունը, և
ահա սկսվում է անհիմաստ ընտրական պայ-
քարը: Այս փոքրիկ համայնքը թալիքաների
է բաժանվում, սկսվում են բամբասաններ-
և անցանկալի խոսակցություններ Համայնք-
ի համարակական կրանքն ալեկոծվում է Ա-
ստեղծված վիճն ամելի է խորանում: Հա-
վատացյալները սկսում են գատ զատ, քաշ-
ված կյանք վարել, միմյանց շեն բարեւում,
նույնիսկ եկեղեցու ողողովնի ժամանակի
միմյանց շեն ողջունում: Կան մարդիկ, ո-
րոնք քահանացին անդպամ շեն բարեւում:

Վերջին դաշտահանդեսի ժամանակ մենք
մեծ ջանքեր գործադրեցինք հուզված մտքե-
րը խաղաղեցնելու և համայնքի մեզ համե-
րաշխություն հաստատելու համար, որը,
մասսամբ, հաջողվեց մեզ: Հրաժեշտի ժամին
մեր տված հորդորուած ասացինք. ԱՄիրելի՛
Հայրենակիցներ, վաղը մեկնում ենք Դելի՛
և ապա՝ Կալկաթա, Վերադարձին, մի քա-
նի օր դարձյալ մնալու ենք ձեզ մոտ: Պողոս
Առաքյալի խորերով, ուզում ենք իմանալ՝
մերդ, ո՞րպէս կամիք, գառազանաւ եկից
առ ձեզ, եթէ սիրով հոգույն հեղութեան մ
արդարութեան և խոնարհութեան: Հա-
մայնքի անդամները միաձայն գուշցին.
Գապազանուլ շենք ուփում, վերադարձեք
սիրով հոգվույն հեղության:

Բոմբեյում մենք եղանք ապրիլի 12—28-ը:
Թե՛ Եկեղեցուած և թե՛ դաշտահանդեսներուած,
ապիթ ունեցանք տեմնելու հայ համայնքի
բոլոր անդամներին և ծանոթանալու նրանց
հետ, բացառությամբ մի քանիսի, որոնք ի-

րենց հայ չեին համարում, այլ իտալացի, ֆրանսիացի և կամ ամերիկացի:

Եկեղեցական և համայնքին վերաբերող գործերի մասին կարևոր կարգադրություններ ամելով, ապրիլի 28-ին Բոմբեյի Հայոց Եկեղեցական Վարչության նախագահի ընկերակցությամբ, սափառնակով, ճանապարհավեցինք նոր Դեկի Հնդկաստանի մայրաքաջաքը: Օդակայան ողջերթի էր եկել հայ համայնքը, որոնց օրոնելուց հետո, ժամը 1-ին սափառնակ մտանք: Դեկի հասանք ժամը 5-ին: Օդը հնդկուցիչ էր բառիս լայն իմաստով շնչելու օդ չկար: Սուկալի տանըլեցինք. գիշերը քնել չկարողացանք, որի հետևանքով հնդկայալ առավոտ անուժ ընկած էինք անկողնու վրա և ոչինչ չկարողացանք ուսոնել:

Կալկաթայից մեզ դիմավորելու համար Դեկի էր եկել Եկեղեցական Վարչության անդամ Սամի Բազիլը (Սմբատ Բարսեղյանը): Սա մի ժիր, աշխուժ վաճառական է, լավ ծանոթ քաղաքին, ուստի սրա ընկերակցությամբ շրջեցինք Հին և նոր Դեկին: Հին Դեկին մի սոսկալի կեղտու, փոշոտ քաղաք է և գտնվում է հակասանիտարական վիճակում: Խոլերայի դեպքերն անպակաս են: Սյստեղ կա բազմագրայան ու հյակապապ մի հսկա տեմպը (տաճար) չորս դարական վուտերով: Այս տեմպի շուրջը աև շուրջն է: Հարցուր հագարավոր մարդիկ իրար գլխի ժողոված ապրանք են վաճառում: Գոռումգոշումից մարդ կարող է խելագարվել: Սուկալի քարշահուտություն է այստեղ, աշխատեցինք շուտ հեռանալ: Սամի Բազիլի հետ այցելեցինք հանրահռչակ Գանդիի սպանության և դիակիզման վայրերը, որոնք արդեն ուխտատեղի էին դարձել:

Այլ պատկեր է ներկայացնում նոր Դեկին: Կառավարական տունը, կառավարական կազմը, մինիստրությունները, սենատը, և գետպանատները տեղավորված են այստեղ: Գեղեցիկ է կառավարական հսկա շենքը: Շենքերի երեք քառորդը միհարկանի են և ունեն մեծ պարտեզներ: Արեից ու շոգից պաշտպանվելու նպատակով, տները այստեղ միհարկանի են կառուցվում: Քաղաքի այս մասը ունի սափառապատ, բարեկարգ փողոցներ: Հյուրանոցները արտաքինով գեղեցիկ են, իսկ ներքուառ տգեղ, կեղտու և հարմարությունից զուրկ: Համարների արժեքը շափազանց բարձր է:

Նոր Դեկիի հարավ-արևելյան մասում է գտնվում մայրաքաղաքի մայր տեմպը, որը վերջերս է կառուցվել մի հարուստ հնդիկի ծախսով: Տեմպը հսկայական տարածություն է բռնում: Ոնի բարեկարգ պարտեզներ, ծառուղիներ: Տաճարը կառուցված է

կարմիր բարից, եռահարկ է: պատերը զարդարված են հնդկական հագարավոր շաստվածների մեծագիր նկարներով: Զնայած շուգին, մեր այցելած ժամանակ տառնարկ հագարավոր ուխտավորներ կային: Արգելվում է կոշիկներով տեմպը մտնել: ստիպված ե-



Բոմբեյի Զբաղաշտական մեհյանի մուտքը

Պանք համեմ թաղիքի հողաթափեր և ապա մտնել: Տեմպը բակում, գարձար կարմիր քարից, կային մի քանի խոշոր փղերի արձաններ, իսկ տեմպի պատերի վրա՝ կապիկների մեծագիր նկարներ: Հնդիկները, ինչպես հայտնի է, պաշտում են նաև փղերին ու կապիկներին:

Ամբոխի մեջ մեր ուշադրությունը գրավեց մի նիհար ու աև փոքրահասակ աղջիկ, գյորկին մի կմախացած երեխայով: Թարգմանի միջոցով հարցրինք.

— Գրկած երեխան ձեր ի՞նչն է:

— Աղջիկս է, — պատասխանեց մանկահասակ կինը:

— Քանի՞ տարեկան եք:

— Տասներկու:

— Երեխա՞ն քանի տարեկան է,

— Երկու:

— Ուշեմն՝ քանի՞ տարեկան հասակում

էք ամուսնացել:

— Ինը:

Ինարկե, պատասխան ինձ համար 22մե-

ցուցիչ էր, պարզվում է, որ Հնդկաստանում 9 տարեկանը ամուսնանում ու մայր է դառնում:

Ամառը Դելհիում անտանելի շոգեր են, իսկ աշնաննու ձմռանը՝ խիստ ցրտեր: Բոլքերում, Կալկաթայում, Մադրասում և այլ քաղաքներում, ձմեռ չի վիճում իսկ Դելհիում և Դարջենիկ ամառանոցում վառարաններ կան ու նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներում արդեն սենյակները տաքացվում են:

Նոր Դելհիում այցելեցինք Սովետական և Իրանյան Դեսպաններին: Երկուան էլ մեր պատվին ճաշկերուց ուլին: Մեր անցագիրը երկու դեսպանատներում կարգավորելուց հետո, մայիսի 6-ին ժամը 1-ին, մեր ուղեկիցների՝ Քեթենչյանի և Բազիլի հետ, սավառնակով թռանք Կալկաթա քաղաքը, ուր կենտրոնացած է Հնդկահայության կեսից ավելին, այսինքն՝ մոտ 1300—1500 հայեր: Անձրևների պատճառով, մի քանի հարյուր կիլոմետր ճանապարհը բռնված էր ամպերի թանձր պատճեռով, որի հետևանքով սավառնակը մեծ դժվարությամբ ժամերով անցնում էր ամպերի բլուրների միջով: Ժամը 5.15-ին հասանք Կալկաթայի Դումդում օրգակայանը: Ընդառաջ էին եկել Կալկաթայի Հայոց Եկեղեցական Վարչության լրիվ կազմը, գլխավորությամբ վարչության նախագահ Մակ Չոնի, քահանայական դասը և Համարնքի մի մասը:

Ներկաներին ճայրդեցինք Վեհափառ Հայրապետի օրհնություններն ու ողջույնները և Մայր Հայրենիքի ժողովրդի եղբայրական շերմ Համբուլները: Օդակայանի դահլիճը թնդաց կեցցներով ի պատիվ Մայր Հայրապետանի և Վեհի:

Մանօթանալով ընդառաջ եկողներին, Հյուրասիրվեցինք սառը ջրերով և ապա ճանապարհվեցինք քաղաքը, որն օդակայանից 30 կիլոմետր հեռու է: Առաջնորդվեցինք Մ. Նազարեթ եկեղեցին, ուր հասանք ժամը 8-ին: Եկեղեցու գավթում սպասում էր հավատացրաների հոծ բազմություն: Թարձր զանգակատնից զանգերն ազդարարում էին առաջնորդի գալուստը: Կային նաև մեծ թըլով Հնդիկներ: Կալկաթայի Եկեղեցական Վարչության անդամ-կառավարիչ Զ. Հանանյանը մի թերթում այսպես է նկարագրել մեր ժամանումը:

«Եկեղեցու զանգակաների դողանջն այդ երեկո հուզումնախառն լացի ու կարուտի հառաջանքի սրտամաշ մինովորտ էր կարծեք ստեղծել: Զգացված էր նաև ինքը՝ Առաջնորդ Հայրը: Մեծ ու անսպասելի եղավ նրա հուզումքը, երբ ներս մտավ եկեղեցու բակը և հայացքն ընկավ այսուել մոռացության հափփունական լուսիթյան ծոցում պա-

րուկված հայրենակիցների մոտ երեք հազար գերեզմանաքարերի վրա: Հարգածը շանթահարիչ էր: Զկարողացավ առաջանալ, թիւ կանգ առավ, զսպեց հուզումը, կամացուկ սղբերից թափլող արցունքը և հետո շատ դանդաղ ու խորհրդավոր կերպով առաջանալ սկսեց, մտախո՞ւ ու կարեկից ոգով»:

Հիրավի, հարգածը շանթահարիչ էր, որովհետեւ չէր կարելի մտածել, որ եկեղեցու փորբիկ գավթում այսքան գերեզմանաքարեր կան: Հնդկաստանը Զուլայից գաղթած հայերի համար եղի է և է համատարած գերեզմաննոց: Ահա թիւ ո՞րն է ներգաղթի և արտագաղթի տարրերությունը: Առաջին դեպքում իրագործվում է ազգահայկաքի և ազգապահանման գաղափարական վեհ ու նվիրական գործը, իսկ երկրորդի՝ արտագաղթի պարագաներում, օտար հորիզոններում, կիմայական ու դժոխալին պայմանների պատճառով՝ հայ ժողովրդից անջատված հատփածը կորցնում է իր ազգային ինքնուրույնությունը և ոչնչանում:

Ժամը 9-ին մեզ առաջնորդեցին Հովսեի Մադամի հյուրանոցում պատրաստած բնակարանը:

Անհրաժեշտ ենք համարում աշխարհի այս կարևոր քաղաքներից մեկի՝ Կալկաթայի մասին, մի քանի համառոտ տեղեկություններ տալ:

Ինչպես հայտնի է, Անգլիան 250—300 տարի իր իշխանության տակ է պահել Հնդկաստանը: Սկզբնական ժքանում կալկաթան մի աննշան փոքրիկ քաղաք է եղել, սակայն հետաքայլում, շնորհիալ այն համամանքի, որ նա Հովսի խոր ու լայն նավարկելի գետի ափին է տեղափորված, կարճ ժամանակվա ընթացքում, զարգացել է և դառնել Հնդկաստանի սմենախոշոր առևտրական կենտրոնը:

Քաղաքն ունի տամայակ հազարավոր սուլտրական հաստատություններ: Կան բազմաթիվ բանկեր, հյուրանոցներ, թանգարաններ, հարուստ կենդանաբանական և բուսաբանական արգելուր: Կենդանաբանական արգում կային բազմատեսակ առյուծներ ու վագրեր, ոնքեղջյուրներ, հայրութափոր կապիկներ, մի քանի տեսակ փղեր, թութակներ, գիշատիչ կենդանիների հազվագյուտ օրինակներ և այլն: Մեզ վրա քստմնելի տպավորություն թողեցին զանազան տեսակի օձերը, առանձնապես կոբրա օձերը: Սրանք սուլուրական օձեց երկար են, շափազանց թոճավոր, համարձակ ու մեծ ավելքածություն են գործում բնակչության մեջ: Կոբրա օձերի մի տեսակը հողի գույն ունի, մի այլ տեսակի մաշկը ծածկված է սև ու ոսկե-

գույն օղակներով։ Ունեն շանթող ու զար-
հուրելի հայացք և տափակ գլուխ։ Սրանք
կիսով շափ սողում և կիսով շափ գլուխը
բարձր պահած հարձակվում են։ Ի դեպ, մի
անգամ ավտոյով անցնում էինք Կալկաթա-
յի ծայրամասերի փողոցներից մեկով, տե-
սանք, որ մի քանի խղճով տնակներից
դիմակներ էին դուրս հանում։ Մեքենա-
վարը մի պահ կանգ առավ և բացատրեց,
որ այս գիշեր կորրա օձը այստեղ 25 հոգի է
թունավորել, որոնց տանում են ահա այրե-
լու։ Սա ինձ համար մի արտակարգ տեսա-
րան էր, իսկ տեղացիներից ոչ ոք չէր հետա-
քրքրվում։ Ըստ երեսութիւն, նրանց համար
դա մի սովորական, աննշան դիպք էր։

գարամի մեծ գահվճի գարդի է կազմում մի
շափառանց մեծ յուղաներկ կտավ, որի վրա
ուսւա աշխարհահուշակ ծովանկարիչ Վերեշչա-
գինը նկարել է հնդիկ երեք ռաջաների՝
բազմած շրեղ զարդարված փղերի վրա և
շրջապատված հանդիսատեսներով։ Նկարը
հետաքրքրական է թե՛ սյուժեյով և թե՛ որ-
պես նկարչական հազվագյուտ գործ։ Այցե-
լուները խմբվում են այս դահլիճում և եր-
կար, շատ երկար դիտում այդ հոյակապ
գործը։

Հիշտակության արժանի է բրիտանա-
կան Ս. Պողոս մայր եկեղեցին, կառուցված
գոթական ոճով, որ տեղադրված է քաղաքի
ամենալավագույն մասում։ Այս եկեղեցին,



Հնդկական մեհյան թոմբեյում

Քաղաքն ունի հոյակապ հուշարձաններ,
փողոցներում և հրապարակներում բազմա-
թիվ բրոնզյա արձաններ, մեծ մասամբ հեծ-
յալ։ Սրանք բրիտանական երթեմնի նա-
հանգամետներն ու փախարքաններն են։
Հուշարձաններից ամենանշանավորն է բրի-
տանական մայր եկեղեցու մոտ գտնը-
վող, քաղաքի արևմտյան կողմում լայ-
նանիստ, մարմարյա մի հսկա շենք, որ կա-
ռուցված է ի պատիվ Վիկտորիա թագուհու
և կոչվում է «Վիկտորիա մեմորիալ»։ Սա մի
թանգարան է, բազմաթիվ հարկարաժիննե-
րով, սակայն պատմական նշանակություն
ունեցող քիչ էքսպոնատներ կան։ Վիկտո-
րիայի իրերից կա մի հիմ պիանինու թան-

հնդկաստանում մեր եղած ժամանակ, վա-
ճառված էր մեկ միլիոն ուսիիով։ Որովհե-
տև հայոց Ս. Նազարեթ եկեղեցին ընկած է
քաղաքի հետամնաց, հակասանիտարական,
ծուռ ու մուռ նեղլիկ փողոցների վրա և հե-
ռու է հայ հավատացյալների բնակության
թաղամասերից, ուստի և խորհուրդ տվինք
եկեղեցական Վարչության անդամներին և
հայ հարուստներին՝ ձեռք բերել բրիտանա-
կան այդ հոյակապ եկեղեցին։

Լուսթքամբ շի կարելի անցնել Կալկաթա-
յի «Նոր Շուկայի» վրայով. սա ոմնի ուրույն
ու և իր ճոխությամբ ու հարստությամբ
աշխարհի խոշորագույն շուկաներից մեկն
է համարխում։

Կալկաթայում կան բազմաթիվ հոյակապ հնդկական մեջաններ՝ իրենց շքեղազարդ շաստվածներով։ Աշխան վերում հնդիկները մեծ շուրջով տոնում են իրենց շաստվածների տոնը։ Տոնակատարությունների ավարտման նախորեն, մեջանների համալիքները բրոնզից, թանգարժեք կտորներից ու մետաղներից կուտքեր են շինում ու զարդարում։ Նշանակված օրը, մեծ

նից մոտ 180—190 տարի առաջ, քրանիսի ծառից մի սկզ են բերամ ու տնկում և այդում։ Այժմ այս սոսից աճել ու զարդարել են 580-ից ավելի ծառեր, որոնց իրարից բաժանված կամ կտրուված չեն, այլ կը մյուսի անբաժան շարունակությունն է կազմում։ Մասերն ունեն հասար բռն և փող շարքերով բռնել են մի պատկառ տարածություն։ Առեն իսկ սառարմին



Իրանա-Հնդկաստանի քեմի առաջնորդ Գերաշնորհ Վանան Արքեպիսկոպոսը Կալկարայի Հայոց Մարդասիրական Ճեմարանի ուսուցչության և աշակերտության հետո

բազմությամբ, երաժշտությամբ, երգով ու պարով, երեկոյան ժամը 8—10-ը, շաստվածները բերում են Հուզի գետի ափը, այստեղ ևս կես ժամ, մի ժամ պարերով ու երաժշտությամբ մեծարում և բացահանչություններով ձգում են նրանց գետը: Միլիոնավոր ոռոգիներ են ծախսվում այս ծիսակատարության վրա:

Եղանք մի քանի տեմպլներում պաշտամունքի ժամանակ։ Թմբկահարությամբ ու մի քանի երաժշտական գործիքների ընկերակցությամբ մի խումբ հավատացյալներ, տեմպլի մի անկյունում, մեծ աղբուկով աղոթք են անում, իսկ ժողովուրդն ազտ զրումում է։ Մեզ համար խիստ տափօրինակ էր նման ձևի պաշտամունքը, որովհետև բացակայում է կարգ ու կանոնու։

Կալիաթայի բուսաբանական ալգին գրտ-
նվում է Հուպի գետի ափին: Այդին մեծ
տարածություն է բռնում, ունի հետաքրքիր
ու հարուստ ֆլորա: Մառերից ամենահետա-
քրքրականն է «բանիան» կոչված ծառը:
Հնդիկները պաշտում են այս ծառը: Սրա-

Նման ծառ Հնդկաստանում կա միմիշա
Մաղրասի բուսաբանական այգում, սակա
մա, համեմատած Կալկաթայի բանիանն
էներ, մի ողորմելի ծառաշարք է: Հաստ
մասնագետներ են հսկում բանիանի աճել
ման, զարգացման ու խնամքի վրա:

Մի անդամ տեղի հովի Տեր Արքամայն
Քահանա Միրզաբանի հետ այցելեցին
դիակիպարան. այստեղ 7—8 խարույկներ
վրա այրում էին մեռածների դիակները: Ե
շարք դիակներ չեն, տոնական զգեստն
հագցրած, դիակիզման հերթի էին սպա-
սում: Հուղարկավորներից ո՛չ ոք չէր առ
տասվում: Դիակիզմից հետո մեռածի և
ճյուղը, ժողովում էին ու թափում Հուկի գո-
տը: Հնդիկների հավատքով, մեռածի առյօ-
նը այստեղից անցնում է Գանգես սրբազն
գետը, որը թափվում է գրախտի մեջ. ու
բեմ՝ աճյունը հանդիսաւ է առնելու գրաի
տում:

Դիմակիզուանն արթե 15—165 ոռուի, նաև
յած թե ի՞նչպիսի փալտով են այրում. կամ
հասարակ, միշտակ և հոսամիտ, թանկարժ

փայտեր: Ոմնեոր դասը հոտավետ փայտերով է այրվում:

Ինչպես Բոմբեյում, այստեղ ևս կան բազմաթիվ սիկոններ: Ռիկովալանները (որից 20 քաշողները) անվերջ վագելու և ծանր բեռներ քաշելու պատճառով, ապրում են միջին հաշվով 25—30 տարի: Ռիկովալանները կմախքացած, վտիտ ու անկենդան մարդիկ են, ապրում են զրկանքի ու կիսաքաղց վիճակում: Երբեմն այս փոքրիկ կառքի վրա առոք փառոք բազմում են երկու գիրուկ անվագիններ, յուրաքանչյուրի ծնկների վրա մի երեխա. և ահա դժբախտ որդովալան, 7—10 կիլոմետր, որպես գրաստ, քաղաքի մի ծայրից մյուսն է փոխադրում նման անսիրտ մարդկանց:

Պատմությունից հայտնի է, որ հայերը մեր թվականությունից դեռ շատ առաջ, առատրական կապեր են հաստատել ինչպես Հնդկաստանի, այնպես և Ճենովայի, Վենետիկի, Ջուանդիայի և արևմտյան մի շարք երկրների հետ:

1605 թ. շահաբասյան մեծ գաղթի ժամանակ, Շահաբասի հատուկ կարգադրությամբ Հին Զուղայի հայությունը տեղահան արվեց. 17-րդ դարի կեսերից, սկսվեց ուժեղ հալածանք ներանց դեմ: Եվ ահա այդ ժամանակ մեծ թվով նոր զուղայեցիներ, գաղտնի, ընտանիքով փախան Հնդկաստան և բնակություն հաստատեցին այնտեղ, պարապելով վաճառականությամբ: Կան նաև տեղեկություններ, որ Հնդկաստանի այլ և այլ քաղաքներում հայեր են եղել գրանից առաջ ևս: Չենսուրայի հայերը, տեսնելով Կալկաթայի գարգացումը և բարգավաճումը, փոխադրվում են խոստմնալից այս քաղաքը, Հայերը, որպես ճարպիկ, համարձակ վաճառականներ, առևտրի ասպարեզ են նետվում և պատվակոր տեղ գրավում: Մեծահարուստ, հայրենասեր աղա Նազարեթը 1724 թվականին Կալկաթայում, իր հաշվով, կառուցում է Ս. Հովհաննես Կարապետի անունը մի եկեղեցի: Հետպհետեւ Կալկաթա են

տեղափոխվում նաև Սուրաթի ու Սելիդա. բագի հայ վաճառականները:

Ճականասեր զուղայեցիները, բնականարար, պիտի ստեղծեին նաև իրենց կուլտուրական կյանքը: Եվ, Հիրավի, 1757 թ. արդեն նրանք ունեին մի դպրոց, իսկ հետագայում, 1821 թ., Մանգական Վարդանյանի շանքերով, Հիմնադրվում է Կալկաթայի Հայոց Մարդարարական Ճեմարանը, որի նպատակն է եղել այս հեռավոր ափերում վառ պահել հայերի մեջ լեզուն, կրոնը, ազգային պատմությունն ու գրականությունը, հեռու պահել մատաղ սերնդին ծուրամուլությունից և տալ նրանց հայեցի դաստիարակություն: Այս նպատակով հրավիրում են ժամանակի ականավոր գրականագետներ՝ Մեսրոպ Թաղիադյանին, Գեորգ Թուրյանին, Հայկաբան Մեսրոպ Սեթին և ուրիշների:

Ճեմարանի ուսանողները գիշերօթիկ են և պահվում են Ճեմարանի հաշվով: Յավով պիտի նշենք որ Ճեմարանը մինչև այժմ էլ ակնկալված արդյունքը չտվեց: Ճեմարանն իր եկամուտներով է ապրել: Վերջին տարիները, պատերազմի հետևոնքով, սննդամթերքների արժեքի բարձրացման պատճառով, Ս. Նազարեթի եկեղեցական Վարչությունը մի զգալի գումարով օգնության հասավ:

Ճեմարանի սեփական շենքը գտնվում է քաղաքի կենտրոնական մասերից մեկում. ունի ընդարձակ բակ, մեծ լողարան, գրադարան-լուսթերցարան, լուսավոր դասարաններ, ճաշարան, կանոնավոր նվազախումբ և երգեցիկ խումբ: Դպրոցի տեսուշը, ըստ Ճեմարանի կանոնադրության, պիտի լինի Հայաստանյաց Առաքելական եկեղեցու հետևող մեկը, լավ գիտցող գրաբարը, հայոց պատմությունը, կրոն և այլն, սակայն, դժբախտաբար, այսօր այդ կարևոր պաշտոնը հանձնված է անգլիացի կաթոլիկ մի սպայի, որը հայերի մասին հեռավոր գաղափար անդամ չունի:

(Շարունակելի)